



Լիբանանեան Լուրեր

Մինչ Ներքին Ճակատով Երկիրը Կը Պատրաստուի Երեսփոխանական Ընտրութիւններու Հրգպալան Կը Շարունակէ Տարածաշրջանային իր Միջամտութիւնները



Մինչ լիբանանեան քաղաքական բոլոր կողմերը միտնուած են ընտրական պատրաստութիւններու մէջ, նշելով որ ընտրական ցանկերու ամբողջացումի վերջնաժամկետը Ապրիլի 4ն է, Հրգպալան կը շարունակէ տարածաշրջանային իր միջամտութիւնները:

Հրգպալան համարած է, որ «Ալ Խուտայր»ի գործողութիւնը կը հաստատէ «պաղեստինցի ժողովուրդին հաստատականութիւնը եւ անոր կամքը՝ դիմակայելու բռնագրաւման՝ բոլոր առկայ հնարաւորութիւններով եւ գործիքներով», եւ որ այս գործողութիւնը «պաղեստինեան անկախ եւ դիմադրող որոշման գործընթացն է»:

Երեկ հրապարակած յայտարարութեան մէջ Հրգպալան համարած է, որ «գործողութիւնը ամենակարեւոր եւ ամենաարդիւնատէր գործնական պատասխանն է բնականոնացման տխրահռչակ եւ դաւաճանական հանդիպումներուն, որ արաբական որոշ վարչակարգեր կը կատարեն թշնամիին հետ», ընդգծելով, որ «կարգաւորման հանդիպումները անկարելի եւ անարդիւնաւէտ են, քանի որ իրական որոշումը պաղեստինեան ժողովուրդին որոշումն է»:

Ան մատնանշեց, որ «պաղեստինցի ժողովուրդը ամէն օր կը հաստատէ, որ այս յանցագործ թշնամիին հետ հաշտեցման եւ բնականոնացման տեղ չկայ», եւ որ իրենք կը գտնուին «սրող հերոսական առճակատման մէջ մինչեւ յաղթանակ եւ ամբողջական ազատագրում»:

Նշեց, որ Հայֆայէն դէպի հարաւ գտնուող Զերպերթ Սամուէլ փողոցին մէջ երկու հոգիի կողմէ իրականացուած հրաձգութեան հետեւանքով սպաննուած է երկու իսրայէլցի, իսկ կան վիրաւորներ, որոնցմէ շատերը ծանր վիճակի մէջ են: Ըստ լրատուամիջոցներուն՝ «Ալ Խուտայր»ի տոյն գործողութեան հեղինակները Ում ալ Ֆահմի 48-րդ շրջանի պաղեստինցիներն են»:

Համիէն Այցելութիւնը Ընդունեց Լիբանանի Մէջ ՀՀ Դեսպանին

Լիբանանի Հանրային Աշխատանքներու եւ փոխադրութեան նախարար Ալի Համիէ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Պրն. Վահագն Աթաբէկեանին: Հանդիպման ընթացքին Պրն. Դեսպանը նախարարին ներկայացուց Հայաստանեան կողմի առաջարկը, որն է՝ Հայաստանի ազգային օդանավային նորահաստատ ընկերութեան միջոցաւ, Հայաստանի եւ Լիբանանի միջեւ օդային երթուղիի հաստատումը՝ Երեւան-Պէյրուս-Երեւան շաբաթը մէկ կամ երկու թռիչքով:



Համիէ պատրաստակամութիւն յայտնեց սերտելու առաջարկը հիմնուելով այն փաստին վրայ, որ նմանօրինակ նախաձեռնութիւն մը դրական նպաստ կը բերէ երկու երկիրներու փոխարարներութեան:

Հայկական Լուրեր

Նպատակ Կայ Պառակտել Մեզ. Արայիկ Յարութիւնեան

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը Մարտ 27-ին հրաւիրած է Անվտանգութեան խորհուրդի ընդլայնուած նիստ: Այս մասին կը յայտնեն Արցախի նախագահի աշխատակազմէն:

Ողջունելով ներկաները՝ երկրի ղեկավարը ըսած է.

«Անվտանգութեան խորհուրդի նախորդ նիստի ժամանակ կայացրել ենք որոշումներ, այդ թւում՝ կոչով եւ խնդրանքով դիմելով Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլադիմիր Փութինին՝ ջանքեր գործադրելու Արցախում տեղակայուած խաղաղապահ զօրակազմի միջոցով հակառակորդի ելման դիրքեր վերադառնալու եւ խաղաղութիւն ապահովելու համար: Այս առումով շատ ողջունելի է մարտի 26-ին ՌԴ ՊՆ եւ ԱԳՆ արձագանգը:

Շաբ. Էջ 02

Մենք Պետք Զէ Վարանինք Յանուն Արցախի Որեւէ Այլ Դժուարութիւն Պատուով Կրելու. Արցախի Թեմի Առաջնորդ

«Արթուրն եղեք, հսկեցէ՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ Սատանան, կը մոնչէ առիւծի պէս, կը շրջի եւ կը փնտռէ, թէ որո՞ւն կու տայ: Դիմադրեցէ՛ք անոր՝ հաստատուն ըլլալով հաւատի մէջ.»

Ա Պետրոս

Սիրելի՛ արցախցիներ, Աստուածաշնչեան այս խօսքը միշտ պիտի զնգայ մեր ականջներուն մէջ, որովհետեւ քրիստոնեան, առաւել եւս հայ քրիստոնեան, ո՛չ մարմնաւոր եւ ո՛չ ալ հոգեւոր առումով թմրելու, սթափութիւնը կորսնցնելու իրաւունք չունի:

Պետրոս առաքեալ իր այս խօսքով կը յորդորէ նախ արթուն մնալ մտքի եւ հոգիի մէջ՝ պաշտպանուելու տեսանելի եւ անտեսանելի հակառակորդներէն: Աստուածաշնչեան այս ճշմարտութիւնը միշտ առաջնորդած է մեր նախնիները, եւ այսօր ալ անիկա պիտի ուղղորդէ մեզի՝ չթուլացնելու նախ հոգեւոր, ապա նաեւ ֆիզիքական զգոնութիւնը: Անիկա այսօր առաւել պատշաճ է աւօրեայ մեր կեանքին. ապրելով նենգ թշնամիներու հարեւանութեամբ՝ զգոնութիւնը թուլացնելու, թմրելու ու ննջելու իրաւունք պարզապէս չունինք, այլապէս պիտի շարունակենք կորուստներ ունենալ: Այսօր ալ թշնամին կը փորձէ ընկճել մեզի զանազան ճանապարհներով՝ տեղեկատուական պատերազմով, արհեստական մարդասիրական ճգնաժամ յառաջացնելով եւ միայն իրեն բնորոշ այլ ստոր միջոցներով: Հետեւաբար Պետրոս առաքեալի յորդորը, որ այսօր արդիական է բազմապատիկ չափով, եւ կը հնչէ այսպէս. «Արթուրն կեցեք եւ պատրաստ եղեք, որովհետեւ չէք գիտեր, թէ թշնամին, որ ժամուն պիտի գայ»:

Այո, դժուար է անվրդով ապրիլ նման պայմաններու մէջ, բայց մի՞թէ նորութիւն է մեզի համար թշնամիի այս վարքագիծը, մի՞թէ առաջին անգամն է, որ կ'ուզեն Արցախը ձգել առանց հայու: Պատմութիւնը լի է նման դրուագներով, բայց ճշմարտութիւնը այն է, որ մինչեւ այսօր մենք դեռ կ'ապրինք մեր երկրին մէջ: Մեզի պէտք չէ ընկճել կենցաղային որեւէ դժուարութիւն եւ որեւէ անորոշութիւն, որովհետեւ, եթէ մեր Նահատակները չվարանցեան իրենց կեանքը տալու Արցախի համար՝ ուրեմն մենք ալ պէտք չէ վարանինք յանուն Արցախի որեւէ այլ դժուարութիւն պատուով կրելու:

Շաբ. Էջ 07

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկազեան Հայագիտական Հանդեսը Այսուհետև Կը Հրատարակուի Երկու Գիրքով



Գոհունակութեամբ կը յայտնենք թէ նկատի առնելով որ արտասահմանէն թէ Հայաստանի ու Արցախի հանրապետութիւններէն, հայ եւ ոչ-հայ ուսումնասէրներու կողմէ *Հայկազեան հայագիտական հանդես*ին առաքուած գիտական բարձրորակ հետազոտութիւնները մեծապէս ակնցած են, *Հանդես*ի խմբագրութիւնը, Հայկազեան Համալսարանին տնօրէնութեան հետ համամտութեամբ, որդեգրեց տարեկան երկու գիրք հրատարակելու որոշումը: Հետեւաբար, *Հայկազեան Հայագիտական Հանդես*ի իւրաքանչիւր հատոր այսուհետև լոյս պիտի տեսնէ երկու գիրքով: 1970 թուականէն հրատարակուիլ սկսած *Հայկազեան Հայագիտական Հանդեսը* ցարդ հրատարակած է 41 հատոր, ակնյի քան 22,000 էջ հայագիտական նիւթ, 1420 յօդուած, շուրջ 700 աշխատակիցներու միջոցով: Հանդեսը զուտ հայագիտական բնոյթ ունի եւ կը հրատարակէ հայութեան անցեալին եւ ներկային, Սփիւռքին, Արցախի եւ Հայաստանի Հանրապետութիւններուն կենսագործունէութեան առնչուող գիտահետազոտական նիւթեր:

Հայկազեան հայագիտական հանդես

Հայկական Լուրեր

Նպատակ Կայ Պառակտել Մեզ. Արայիկ Յարութիւնեան

Սկիզբը Էջ 01

Շատ կարեւոր էր նաեւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահ միւս երկրների անդրադարձը, ինչպէս նաեւ ՀՀ մեր գործընկերների ակտիւ աշխատանքը: Ինչպէս գիտէք, իրավիճակի կայունացման նպատակով տեղի է ունեցել ՀՀ վարչապետի եւ ՌԴ նախագահի, ՀՀ եւ ՌԴ պաշտպանութեան նախարարների հեռախօսային քննարկումները, որոնց հետեւել է ՌԴ-ի եւ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարների հեռախօսագրոյցը: Այսինքն, շահագրգիռ ու պատասխանատու երկրները, գնահատելով իրավիճակը, իրենց միջնորդական առաքելութիւնն են կատարել», ըսած է նախագահ Յարութիւնեանը: Անդրադառնալով հանրային եւ քաղաքական որոշ շրջանակներու այն շահարկումներուն, թէ իբրեւ ատրպէյճանական կողմի վերջին օրերուն ծաւալած յարձակումը Արցախի իշխանութիւններուն հետ որոշակի պայմանաւորութիւններու արդիւնք է՝ նախագահն զայն որակած է սադրիչ եւ պառակտող:

«Մեր պայմանաւորութիւնը մէկն է՝ եռակողմ յայտարարութեան կէտերի կատարումը, որեւէ այլ պայմանաւորութիւն չի կարող լինել: Ուստի, նման սադրիչ յայտարարութիւնները նպատակ ունեն շեղել մեզ իրական խնդիրներից, միասնականութիւնից եւ պառակտել հանրութեանը: Ոչ միայն որեւէ պայմանաւորութիւն չի կարող լինել, այլեւ ոչ մի որոշում չի կայացուելու առանց Անվտանգութեան խորհրդի կազմի կամ ընդլայնուած կազմի հետ քննարկելու», ըսած է նախագահը: Այսուհետև երկրին մէջ առկայ ռազմաքաղաքական վերջին իրադարձութիւններուն վերաբերեալ զեկուցմամբ հանդէս եկած է ԱՀ պաշտպանութեան նախարար Կամո Վարդանեանը:

Նիստում կրկին յստակացուած են ստեղծուած իրավիճակում համարժէք քայլերու ձեռնարկման հետ կապուած հարցեր: Նախագահ Յարութիւնեանը տուած է շարք մը յանձնարարականներ:



Պատմութեան Մէջ Այսօր

Կարապետ Տէր Մկրտչեան

Կարապետ Տէր Մկրտչեան (29 Մարտ 1866, Յոնա, Նախիջեւանի գաւառ, Երեւանի նահանգ, Կովկասի Փոխարքայութիւն, Ռուսական Կայսրութիւն - 19 Նոյեմբեր 1915 կամ 2 Դեկտեմբեր 1915, Պաքու, Ռուսական Կայսրութիւն), Աստուածաբան, պատմաբան, բանասէր, փիլիսոփայ եւ եկեղեցական գործիչ:

Ծնած է Նախիջեւանի Յոնայ գիւղին մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի ծխական վարժարանէն ներս եւ ապա ընդունուած՝ Չաքաթալայի գաւառական դպրոցը:

Կարապետ իր մօրեղբօր՝ Յովհան Աւագ Վարդապետի միջնորդութեամբ 1880 թուականին ընդունուած է Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգեւոր ճեմարանը, ուրկէ շրջանաւարտ եղած է 1888 թուականին:

Ուսումը աւարտելէ ետք ուսուցչութեան պաշտօն վարած է Գեորգեան ճեմարանէն ներս, միաժամանակ վարելով մատենադարանապետի պաշտօնը:

Կարապետ Տէր Մկրտչեան 1889 թուականին Գեորգ Զ. Չորեքճեանի եւ Գարեգին Ա. Յովսէփեանի հետ օծուած է Կուսակրօն. այսուհետև իր ուսումը շարունակած է Լայպցիգի եւ Պերլինի բարձրագոյն ուսումնարաններուն մէջ, հետեւած է Փարիզի Սորպոնի համալսարանի

եւ Մարպուրկի բողոքական աստուածաբանական հիմնարկի ուսուցումներուն: Նոյն տարիներուն գիտական յօդուածներով աշխատակցած է գերմանական յայտնի կրօնական հանդէսներուն: Ուսումէն ետք վերադարձած է Սուրբ Էջմիածին եւ նշանակուած՝ Գեորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչի օգնական եւ կրօնական առարկաներու ուսուցիչ, իսկ 1899-ին նշանակուած է Գեորգեան ճեմարանի տեսուչ:

Բանասէրը 1902-1906 թուականներուն եղած է «Արարատ» հանդէսի կրօնական բաժնի պատասխանատու եւ ապա հանդէսի ընդհանուր խմբագիր: Տէր Մկրտչեան 1907 թուականին ընտրուած է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ եւ այդտեղ հրատարակած է «Առաւօտ» շաբաթաթերթը, իսկ 1910-1912 թուականներուն խմբագրած է «Թաւրիզի Յայտարարութիւններ» թերթը:

Հեղինակ է բազմաթիւ գիտական, Աստուածաբանական եւ փիլիսոփայական ուսումնասիրութիւններու եւ յօդուածներու: 1902-1903 թուականներուն Կաթողիկոսի հրամանով ձեռնարկած է Աստուածաշունչի հրատարակման՝ աշխատանքներ համեմատելով եօթ տարբեր ձեռագրերու, սակայն ներքին անհամաձայնութիւններու պատճառով չէ հասած իր աւարտին: Ուսումնասիրած է բազմաթիւ ձեռագրեր եւ հրատարակած է զանոնք «Արարատ» հանդէսի մէջ, ինչպէս «Գիրք Թղթոց»ը եւ այլն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու կը յայտարարենք, թէ Խաչիկ Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամի Յանձնախումբը կը շարունակէ իր գործունէութիւնը՝ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Յանձնախումբի անդամներն են.- տեաքը Երուանդ Փամպուքեան (Լիբանան), Շահան Գանտախարեան (Լիբանան), Կիւր Մանոյեան (Հայաստան), փրոֆ. Աշոտ Մեքընեան (Հայաստան), Խաչիկ Տէր Ղուկասեան (Արժանքի) եւ դոկտ. Միհրան Տապալաղ (Գերմանիա): Յանձնախումբի տրամադրութեան տակ կը գտնուին որոշ թիւով գործեր, զանազան լեզուներով, որոնք յաջորդաբար պիտի հրատարակուին յառաջիկայ ամիսներուն:

Հիմնադրամը 2022-ի համար պատրաստ է ընդունելու նոր գործեր՝ ուսումնասիրութիւններ եւ կամ ուսանողական աւարտաճառեր, որոնք առնչուած են հայ դատի, հայ քաղաքական մտածողութեան զարգացման, Սփիւռքի հովովոյթին եւ հայ ժողովուրդի բռնագրաւուած իրաւունքներուն:

Ներկայացուելիք աշխատութիւնները պէտք է յղել հետեւեալ հասցէին.- Khatchig Babikian Publication Fund

Armenian Catholicosate of Cilicia

P.O.Box 70317

Antelias, Lebanon

E-mail: chancellor@armenianorthodoxchurch.org

ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԸ

Գառնիկ Եագուլայեանի Լուսէ Յիշատակին. Զրանուշ Յակոբեանի Ցաւակցագիրը

Եագուլայեան գերդաստանի բոլոր անդամներին, սգակիր կնոջը՝ Անիին, սիրասուն զաւակներին, Վազգէնին, Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքի Մեր Մեծագոյն Զայ, ազնուագոյն Բարեկամ, յայտնի Բարերար, հայրենասէր եւ ազգասէր, խոհեմ եւ փորձառու Գործիչ Գառնիկ Եագուլայեանը դարձաւ յաւերժի ճամփորդ:



Խորապէս վշտակցում եմ Եագուլայեանների ընտանիքին, քեզ՝ իմ սիրելի, թանկագին եւ համեստափայլ Անի, Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ղեկավարութեանը, ցաւակցում եմ մեզ բոլորիս, քանզի ազնիւ ու նուիրեալ Զայորդու մահը մեծ կորուստ է ոչ միայն Եագուլայեան գերդաստանի, նրան ճանաչողների, սիրահայ համայնքի, այլեւ բոլորիս համար:

Այս ծանր ժամանակներում, երբ ալեկոծուած է մեր ողջ ժողովուրդը, երբ ունեցել ենք անչափ թանկ կորուստներ, ծուռտուած ու արնածոր են մեր սրտերն ու հոգիները, բզկտուել է Արցախ աշխարհը, պատկերացում եմ, թէ ինչպիսի հոգեկան տառապանք ու խռովք է ապրել այդքան հայրենասէր, այդքան ազգասէր ու մարդասէր Անհատը: Մարդ, ով լիաբուն ու վեհանձնորէն օգնեց իր հայրենակիցներին, Սիրիայում եւ սիրիական աղէտից յետոյ:

Գառնիկ Եագուլայեանը զաւակն է Զայոց ցեղասպանութիւնից մազապուրծ, տառապեալ մարդկանց, ովքեր հաստատուեցին Սիրիայի հիւրընկալ հողում եւ շուտով Եագուլայեան ընտանիքն իր աշխատասիրութեան, բանիմացութեան եւ պատասխանատուութեան շնորհիւ կարողացաւ լայնամասշտաբ պիզնես ծաւալել Սիրիայում, եւ Գառնիկ Եագուլայեանն էլ դարձաւ այդ ամենին ոգի եւ շունչ հաղորդող անձնաւորութիւնը: Նա օտար ափերում ճանաչում, պատիւ ու հեղինակութիւն ձեռք բերեց եւ ապրեց իր կեանքը՝ որպէս լաւագոյն Զայ, համեստ եւ խելացի Մարդ եւ մեծ Բարերար, Մայր ժողովրդի եւ Զայ եկեղեցու նուիրեալ Զաւակ:

Ես հնարաւորութիւնն եմ ունեցել հանդիպելու եւ գործակցելու Եագուլայեան ընտանիքի հետ, լսելու Եագուլայեանի խորագէտ խօսքը, հաւասարակշռուած խորհուրդները, վայելելու նրա եւ սիրասուն տիկնոջ փառաւոր ներկայութիւնը: Եագուլայեանների հետ քննարկել եմ Զայրենիք-Սփիւռք գործակցութեան շատ ու շատ նախաձեռնութիւններ, ազգաշահ ծրագրեր, լսել նրանց առաջարկութիւնները, ինձ համար բացայայտել Զայրենիքի եւ հայկական Սփիւռքի ապագային միտուած Եագուլայեանական տեսլականը: Գառնիկ Եագուլայեանը հաստատուն կերպով կանգնեց կարօտեալի եւ անգործի կողքին, բարոյական եւ նիւթական աջակցութեամբ սպեղանի դրեց դժբախտութեան ու վտանգի մէջ յայտնուած, ծուլեւ-ծուլեւ եղած ժողովրդի ցաւին ու վերքին, դարձաւ Սիրիահայութեան եւ Զայրենիքի ամուր յենարանն ու տարածամիտ փրկութեան յուսալի պատուարը: Նա լռելեայն կատարում էր լայնամասշտաբ բարեգործութիւններ՝ ուղղուած սիրիական համայնքի ծաղկմանը, ԶԲԸՄ հզօրացմանը, մատուցում անձնուրաց ծառայութիւններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեանը:

Գառնիկ Եագուլայեանը եղաւ եւ մնաց Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հզօր յենասիւններից մէկը, Պօղոս Նուպարի ու Ալեք Մանուկեանի հաւատաւոր աշակերտն ու նրանց գաղափարների շարունակողը եւ՝ Սիրիայում եւ՝ Զայաստանում: Նա որպէս հաւատաւոր զինուոր, որտեղ էլ որ եղաւ, միշտ կենսագործեց Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան որդեգրած <<Զայկականութիւն-Բարեհոգութիւն-Ընգծուած Մարդասիրութիւն>> արժեքներն ու իր շրջապատում, իր պատուաւոր եւ փառահեղ ներկայութեամբ շատերին պարտադրեց զինուորագրել այդ վեհ գաղափարներին: Լինելով բարձր արժեքների դաւանող ու մարդկային գեղեցիկ որակներ կրող անձնաւորութիւն, ծաւալելով հայանպաստ եւ հայրենապաշտ գործունեութիւն, դիմակայելով տարբեր ժամանակներում մեր ազգին պարտադրուած մարտահրաւերներին, նա սիրիական պատերազմի ժամանակ առանց դիւզն իսկ տատանուելու իր գերդաստանով բռնեց Զայրենիքի ճամփան՝ օրինակ ծառայելով շատերին, եկաւ եւ հաստատուեց Զայաստանում:

Շաբ. Էջ 06

Փշրուած Երեկէն

ՍԱՐԳԻՍ ՓՈՇՕՂԵԱՆ

«Զարթօնք»ի Երեց Աշխատակից

Ինչ խանդավառութեամբ պատանութենէ երիտասարդութիւն անցնող տարիքին կ'երգէինք «մերիններուն» հետ (Վարժարանին մէջ կար ընդլատարեալ խմբաւորում) Միասնութեան երգեր աշխարհի չորս ծագերը ի մի բերող որոնց գլխաւորն էր «Բիւր ազգի որդիներս, երագում ենք խաղաղ կեանք ու սէր, մենք այս ահեղ օրերին կռոււմ ենք որ ազատ միշտ լինինք եւ այլն»: Զաւատքն էր որ կը ներգործէր. Չէինք մոռնար նաեւ մեր բաժինը՝ ազգային յեղափոխաշունչ խօսքեր. Օրինակ մը Զարեմնէն .- «Սժմա, օ, Սժմա, օրհնուի՛ թող այն վայրկեանը կարմիր աշխարհում այս չար երբ մարդու սրտում առաջին անգամ հրի փոխուեցար ու Ակնի՛ դարձար»... Երանելի օրեր. Զաւատա՛լ մարդուն, ունենա՛լ Զայեացք: Բայց ինչպէս ոչ մէկ բան կայուն



չէ, անցան օրեր ու տարիներ ու փորձառաբար եւ՝ անձնական եւ երկիրներու մէջ պատահած խռովութիւնները ցոյց տուին որ ԵՐԱՉՆԵՐԸ ԳԵՐԻ ՉԵՆ ԴԱՌՆԱՐ, եւ անիրականալի երագներն գլխաւորն է ԶԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ մէկ կողմէ աղքատներու եւ զիրենք աղքատացնողներու միջեւ եւ Մեծ Պետութիւններու եւ Ենթակայ Պետութիւններու, եւ չկայ հասարակ յայտարար նախնադարերն ի վեր: Օ՛, պատանութիւն եւ...Բիւր ազգի որդիներս եղբայրակցութիւն. մոռնալով ազգայինը, ընկերայինը, վերջապէս «երկրային դրախտային»ին մէջ պիտի ձուլուէին յանուն ընդհանուր խաղաղութեան եւ համերաշխ կեանքի եւ արդէն հասած պիտի ըլլայինք ԶԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ: Օ՛, պատանութիւն, բարեացակամութիւն եւ հանդուրժողութիւն, որոնց խմբավարն էր ԶԱՄԱՅԸ ի հարկէ ծննդոցը «Վերին Խաւն» էր:

Մարդկայնական գաղափարաբանութեան արգասիք, առանց որ ՍԱՐԴԱՐԱՐԱՇԸ քննած, սերտած, գէթ պատմութեան ժառանգած տուեալներով, վերջապէս ՃԱՆՉՑԱԾ ըսենք մէկ բառով, կարճ կտրուկ: Օրերը թաւալեցան ու իրականութիւնը իր բարձրագոյն երագներն տապալեցաւ եւ տեսանք կմախքը անոր, թէւ շատերու համար արդէն ուշացած: Պետք էր քիչ մը քննական ըլլալ, համապարփակ, ու սերտել անցեալը առարկայօրէն: Միայն միտք մը «ԿԻԼԿԱՄԻՇԻ ԶԵՐՈՍԱՍԱՐՏ»էն (Չորս հազար հինգ հարիւր տարուան հնութիւն ունեցող) բաւ էր ցուցմունք ըլլալու.-«Ուտնապիշտին բարբառում է նրան, իր ընկերուհուն. ԿԵՂԾԱԴՈՐ Է ՍԱՐԴԸ, ՆԱ ԶԵՉ ԿԸ ԽԱԲԻ», բաւ էր ցուցմունք ըլլալու բարեմիտ կամ այդպիսի խօսքերու հեղինակներուն ջարդելու եւ մէկդի շարտելու եւ վարդապետութիւն եւ հաւաքականութեան հանդէպ վստահութիւն (թէւ առանց անոնց ալ անկարելի է շարժում յառաջացնել): Շարժումի մասնակիցներ պետք է եւ վստահութիւն եւ կասկած ունենան իրարու վրայ:

Գաղափարապաշտութիւնը լաւ բան է. Անո՛վ կը մղուին ժողովուրդներ ու մարդիկ:Այդպէս երագեցինք ու անցանք. Մնաց յուշը դառնաղի փշրուած ծաղկամանի նման անկարելիին՝ որուն հաւատացեր էի, էինք, ու անով կը շնչէինք ու կ'ապրէինք: Յոգնակիներէն բազմաթիւ եզակիներ յառաջացան ու ամէն մէկը իր ճամբով իր սեփականին հետամուտ՝ ցրուեցան: Ամէն ոք իր բախտին, ազատութեան, ինչպէս հովին ենթակայ թերթիկ թռուցիկի նման: «Բիւր ազգի որդիներս»...

Իսկ հիմա նստեր եմ լուռ դէմը՝ հեռուստացոյցին. Դիտելով քաղուածք մը կ'ընեմ երեւակայութեան թելերով եւ մարդկութեան եւ մեր ազգին անցեալն ու ներկան: Ուրբանիա, Պաղեստին, Արցախ, Զայաստան...ու սրտիս զարկերուն խնայելու համար կը փակեմ հեռուստացոյցը: Ապա՛ Առանձնութիւն: Մենախօսութիւն եւ գրութիւնն այս:

Մշակութային Արձագանգ

Օսքար Ստացած Հայազգի Արուեստագետներ



Կիրակի, 2022 թուականի Մարտի 27-ին, Լոս Անճելեսում տեղի ունեցավ «Օսքար» հերթական մրցանակաբաշխությունը: Այս առիթով ներկայացնում ենք այն 10 հայերին, ովքեր այս տարիների ընթացքում արժանացել են այդ մրցանակին: Նրանցից երկուսը մեկից անել անգամներ են Օսքար մրցանակ ստացել: Հագուստների ձեւաւորող Այրին - Իռեն Շարաֆը (5 անգամ) եւ երաժշտական, դաշնակահար եւ գործիքաւորող Միշէլ Ժան Լեգրանը (3 անգամ): Կարելի է ընդարձակ անդրադառնալ ամեն մեկի կեանքին ու գործունէութեանը, բայց այս առիթով բաւարարուենք սեղմ տեղեկութիւնների հետ: Այս նիւթը կազմելու համար աղբիւր են հանդիսացել համացանցային տարբեր էջեր:

ՌՈՒԲԻՆԱ ՕՅԱՆԵԱՆ

1. Հոլիուտի լեգենդը. Այրին - Իռեն Շարաֆ/եան



Չգեստների Հոլիուտեան լեգենդար նկարիչ Այրին Շարաֆի կեանքի մասին քիչ տեղեկատուութիւններ կան: Նա 5 անգամ արժանացել է Օսքարի մրցանակին՝ հետեւեալ դասական ֆիլմերի զգեստների համար, - «Կլեոպատրա», «Ով է վախճնում Վիրջինիա Վուլֆից», «Թագաւորը եւ ես», «Ամերիկացին Փարիզում», «Վեսթսայդեան պատմութիւն»: Բացի այդ, նրան 15 անգամ առաջադրել են Օսքարին:


Այրին Շարաֆը նաեւ դերասաններ եւ զգեստներ է պատրաստել ամերիկեան բալետի թատրոնների համար: Նիւ Եորքի կերպարուեստի եւ կիրառական արուեստի դպրոցի շրջանաւարտը նկարագարել է «Vogue» եւ «Harper's Bazaar» ամսագրերը: Հենց նրա պատուին են անուանել «Թատրոնի զարգացման հիմնադրամի» մրցանակը՝ «Իռեն Շարաֆի կեանքի ձեռքբերումը». («Irene Sharaff Lifetime Achievement» մրցանակ), որ 1993 թուականից սկսած՝ ամեն տարի շնորհւում է հագուստի հռչակաւոր դիզայներներին:

Այրին Շարաֆեանը ծնուել է 1910-ին, Պոստոնում: Նրա ծնողները Արեւմտեան Հայաստանից էին: Այրինը հազուադէպ է խօսել իր հայկական ծագման մասին: Այդ փաստը կարող էր ինչ-որ կերպ ազդել նրա ասպարէզին վրայ: Նա իր աշխատանքն սկսել է որպէս բեմանկարչի օգնական, ապա ձեւաւորել է թատերական տարբեր ներկայացումների դերասաններն ու հագուստները, որոնք դարձել են նրա ուղեգիրը դէպի Հոլիուտ: Այրինը շատ մտերիմ է եղել Պարպարա Սթրեյզանդի եւ Էլիզաբեթ Թէյլորի հետ: Մահը՝ 1993 թուականին, Նիւ Եորքում:

Այրին Շարաֆի աշխատանքներից



2. Միշէլ Ժան Լեգրան



Այրին Շարաֆից յետոյ ամենից շատ Օսքարի առաջադրուած հայազգի գործիչը Միշէլ Լեգրանն է: Նա 13 անգամ թեկնածու է դարձել Օսքարի, որից երեքի դէպքում ստացել է այն: Եւրոպացիների սրտերը վաղուց գերած երաժշտական առաջին Օսքարը ստացաւ 1968 թուականին «Թմաս Զրաունի խաբէութիւնները» ֆիլմի սաունդթրեքի, երկրորդը՝ «42-ի ամառը» ֆիլմի, երրորդը՝ Պարպարա Սթրեյզանդի մասնակցութեամբ «Յենթը» ֆիլմի համար:

Լեգրանը 11 տարեկանում ընդունուել է Փարիզի կոնսերվատորիան, 22 տարեկանում ամենավաճառուող ալպոմի հեղինակ է դարձել: 1951 թուականին, ընդամենը 19 տարեկան հասակում, Լեգրանը գրում է գործիքաւորումներ իր հօր նուագախմբի համար: Այսպիսով, Լեգրանը սկսում է երաժշտական ուղեկցորդի եւ գործիքաւորողի ասպարէզ՝ աշխատելով անուանի երաժիշտների հետ:


Սօր կողմից հայ՝ ֆրանսիացի երաժշտական, դաշնակահար, գործիքաւորող, բեմադրիչ եւ երգիչ Միշէլ Ժան Լեգրանը ծնուել է 1932 թուականին, Փարիզում, երաժիշտների ընտանիքում: Մահը 2019-ին, Ֆրանսիա: Գրել է անելի քան 200 երգ կինոֆիլմերի եւ հեռուստաֆիլմերի համար:

1954 թուականին, ամերիկեան «Գոլումպիա» ընկերութեան խնդրանքով, նա կրկին ֆրանսիական ծագի դասախօսութիւններ է կարդում: «I love Paris» ալբոմը մեծ յաջողութեան է հասնում՝ 8 միլիոն օրինակի վաճառք գրանցելով: Լեգրանը ձեռք է բերում միջազգային համբաւ: Նա 1957 թուականին, Մոսկուայի համաշխարհային երիտասարդական փառատօնին մասնակցելու իրաւը է ստանում:

Միշէլ Լեգրանը արժանացել է բազմաթիւ պարգէների. Նրանց շարքում՝ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ շքանշանին՝ 2009 թուականին:

Միշէլ Լեգրանը (աջից երկրորդը) իր Օսքարներից մեկի հետ

3. Ուիլիամ Սարոյեան (Օսքար մրցանակի արժանացած առաջին հայը)



1944 թուականին բախտը ժպտաց, եւ հայերն առանց Օսքարի չմնացին: 36 տարեկանում «Մարդկային կատակերգութիւն» ֆիլմի սցենարի համար գրող, դրամատուրգ Ուիլիամ Սարոյեանն արժանացաւ ամերիկեան կինոակադեմիայի մրցանակին՝ Օսքարին:

Շատերը սխալմամբ կարծում են, որ ֆիլմը նկարահանուել է «Մարդկային կատակերգութիւն» վէպի հիման վրայ, մինչդեռ եղել է ճիշտ հակառակը: Սկզբում գրուել է ֆիլմի սցենարը: 1941 թուականին «Մեթրօ-Կլուուին-Մայեր» ընկերութեան բեմադրիչ Լուիս Մայերն առաջարկում է Սարոյեանին գրել սցենար պատերազմական թեմայով, որը կը ներկայացնի պատերազմի աներիչ հետեւանքներն ամերիկացիների կեանքում եւ կը բարձրացնի նրանց ոգին:

Շար. Էջ 05

Մշակութային Արձագանգ

Օսքար Ստացած Հայազգի Արուեստագետներ

Սկիզբը էջ 04

Պատերազմով անցած եւ այն ողջ հոգով ատող Սարոյեանի համար դա հոգեհարազատ թեմա էր: Կարճ ժամանակահատվածում նա ներկայացնում է պահանջուած սցենարը՝ անելի քան գոհացնելով կինոընկերության ակնկալիքները: Նրան վճարում են այդ ժամանակուայ համար չստուած գումար՝ 60,000 ԱՄՆ դոլար:

Մինչ ֆիլմը կը յայտնուէր Էկրաններին, կարճ ժամանակամիջոցում իր գրած սցենարի հիմա վրայ՝ Սարոյեանը ընթերցողների դատին յանձնեց «Մարդկային կատակերգութիւն» վէպը, որն, ինչպէս այդ ժամանակի մամուլն էր նշում, ընդամենը մէկ շաբաթում դարձաւ պէսթսելը:

Սա այն եզակի դէպքերից է, երբ գիրքն է գրուել կինոսցենարի հիման վրայ: Իսկ մինչ այդ «ԷՄ ԸԻ ԷՄ»-ում տազնապած էին՝ արդեօք վէպի այդպիսի շլացուցիչ յաջողութիւնից յետոյ ֆիլմն առհասարակ կը դիտուի: Ի երջանկութիւն Մայերի, ֆիլմը նոյնպէս սիրուում է եւ ներկայացում Օսքարի 5 անուանակարգերում: Ի երջանկութիւն, այս անգամ Սարոյեանի, Օսքարը բաժին է հասնում միայն իրեն:

4. Շերիլին Սարգսեան - Շեր



Օսքարի, Ոսկէ Կլոպուսի, Էմմիի, Գրեմմիի մրցանակակիր Շերիլին Սարգսեանը՝ Շերը, թերեւս ամենայայտնի հայուհին է համարում ԱՄՆ-ում: Նրան կոչում են «Փոփի աստուածուհի», «Փոփի թագուհի», նրա սկաւառակները մինչ օրս ամենավաճառուողներից են

աշխարհում: Նա հպարտօրէն նշում է իր կիսով չափ հայ լինելու մասին, վերջին շրջանում՝ անելի յաճախ:

Հենց Շերն է ամերիկեան երգարուեստի պատմութեան մէջ սահմանել նոր, անգերազանցելի մրցանիշ: Նա իր դերասանական աշխատանքն սկսել է 1982 թուականից: Նրա դերասանական խաղերի մասին քննադատները դրական են արձագանքում, եւ Շերը առաջադրում է Օսքար մրցանակների: 1987 թուականին Շերը Օսքար է շահում «Լուսնով հմայուածները» կինոնկարի համար: Յիշուող է այն ելոյթը, որտեղ նա Օսքար ստանալուց յետոյ՝ հատ առ հատ շնորհակալութիւն էր յայտնում ֆիլմի ամբողջ կազմին, յատկապէս այն մարդկանց, որոնց գրեթէ երբեք չէն յիշատակում:

Ամերիկահայ փոփ-երգչուհի, երգերի հեղինակ, դերասանուհի, բեմադրիչ Շերիլին Սարգսեանը ծնուել է 1946 թուականին Էլ Մենթրօ քաղաքում, Բալիֆորնիա: Վաղ տարիքից Շերը երազում էր յայտնի դերասանուհի դառնալ եւ արդէն մանկութեան տարիներին աշխատում էր ինքնագրերի համար իր ստորագրութեան վրայ:

5. Սթիւըն Չայլիեան



«Շինտլերի ցուցակը», «Նիւ Եորքի անագակ ախմբերը», «Արթնացում», «Վիշապի դաջուածքով աղջիկը», «Հաննիպալ», «Անհնարին առաքելութիւն» եւ այսպէս դեռ երկար կարելի է թուել այն յայտնի ֆիլմերը, որոնց սցենարի հեղինակը Սթիւըն Չայլիեանն է:

1994 թուականին «Շինտլերի ցուցակը» ֆիլմի համար նա արժանացաւ Օսքարի,

մինչ այդ 1990 թուականին «Արթնացում» ֆիլմի համար եւս առաջադրուել էր կինոակադեմիայի մրցանակին: Օսքարի առաջադրուեց նաեւ 2003-ին եւ 2012-ին «Նիւ Եորքի անագակախմբերը», «Մարդ, որ փոխեց ամեն ինչ» եւ «Մանիպոյ» ֆիլմերի համար:

Հայկական ծագումով ամերիկացի սցենարիստ Սթիւըն Չայլիեանը ծնուել է 1953 թուականում, Ֆրեզնոյում, Բալիֆորնիա: Նրա հայրը՝ Ճիմ Չայլիեանը, եղել է ռատիօ լրագրող: Մեծացել է հայոց ցեղասպանութեան մասին պատմութիւնների ներքոյ: Յաճախել է Սոնոմայի համալսարանը: Աւարտել է Սան Ֆրանսիսքոյի պետական համալսարանը՝ 1975 թուականին: Ստեղծել է արտադրական ընկերութիւն: Հեղինակ է բազմաթիւ ֆիլմերի սցենարների:

Ապրում է Լոս Անճելըսում իր կնոջ եւ երկու երեխաների հետ:

6. Լեւոն - Լեօ Չալուկեան



Լեւոն - Լեօ Չուլակեանը 1987 թուականին արժանացել է Օսքարի մրցանակին, որպէս ձայնային լաւագոյն բեմադրիչ:

Լեօ Չալուկեանը ծնուել է 1928 թուականին, Տիթրոյթում, ԱՄՆ: Ծնողները երկուսն էլ Արեւմտեան Հայաստանից են, որոնք գաղթել են Նիւ Եորք՝ Չալուկեանի խօսքերով՝ «յայտնի իրադարձութիւններից յետոյ»: Նրանք իրար հանդիպել եւ ամուսնացել են Նիւ Եորքում: Ընտանիքը յետագային տեղափոխուում է Բալիֆորնիա:

Չալուկեանը երբեք չէր մտածում, որ կարող է յայտնուել կինոյի ասպարէզում: Նա կինոստուդիայում սկսել է աշխատել որպէս հասարակ բանուոր, իսկ շնորհիւ իր հետեւողական ջանքերի առաջացել է, մասնագիտացել է եւ իր մասնագիտական ոլորտում արժանացել տարբեր մրցանակների, եւ Օսքար մրցանակի:

Լեօ Չալուկեանը միշտ յիշում էր, որ կային մարդիկ, որ վիրաւորական էին վարում իրեն հետ՝ ասելով. «Պնա՛ քո ուղտերը քչիւր անապատում...»: Իսկ երբ նա հերթական նուաճումներն ունեցաւ ու շահեց բազմաթիւ մրցանակներ, ապա նոյն մարդկանց համար հպարտութիւն էր սեղմել իր ձեռքը: Նա իր աշխատանքը սկսեց որպէս բանուոր, հասաւ փառքի, հասաւ Սպիտակ Տուն, որտեղ ընթերց ԱՄՆ նախագահի հետ, եւ ուրիշ, եւ ուրիշ ձեռքբերումներ:

Լեւոն - Լեօ Չուլակեանին ժամանակին առաջարկել էին փոխել իր հայկական ազգանունը՝ Հոլիուտում հարթ առաջնաւոր համար, ինչը նա կտրուկ մերժել է: Նա չէր կարողացել աւարտել միջնակարգ կրթութիւնը: Օսքար մրցանակի արժանացած հայազգի Լեօ Չալուկեանը 2017 թուականին՝ 90 տարեկան հասակում, ստանում է միջնակարգն աւարտելու իր վկայականը: Մահը՝ 2019 թուականին, Լոս Անճելըսում:

7. Թոմաս - Թոմ Օհանեան



Թոմաս - Թոմ Օհանեանի թեքնիքական նորարարութիւնը կինոասպարէզում, փոխեց կինոյի աշխարհը՝ հեշտացնելով կինոյի արտադրութիւնը՝ մոնթաժը: Ներկայիս Հոլիուտում նկարահանող ֆիլմերի մօտ 95 տոկոսը մոնթաժում է Թոմաս Օհանեանի հեղինակած Avid համակարգչային ծրագրով: Նա այդ բնագաւառում լաւագոյն փորձագետներից մէկն է ողջ աշխարհում: Տարբեր ակադեմիաներում գիտական եւ այլ մրցանակների է արժանացել նա, որոնցից նշելի է 2000 թուականին՝ Նրա ստացած Օսքարի մրցանակը:

Թոմաս Օհանեանը ծնուել է 1960 թուականին, Ռոտ Այլընտում, ԱՄՆ: Նրա ծնողները խարբերոյ շրջանից են. Արեւմտեան Հայաստան: Նրանք ԱՄՆ-ն են գաղթել ցեղասպանութեան տարիներին: **Թ. Օհանեանի համար կարեւոր թեմա է հայոց ցեղասպանութիւնը: Այդ նիւթով անգլերէն գրքի հեղինակ է. «Lines of the sands». («Գծեր անագի վրայ»): Նոյն թեմայով վաւերագրական ֆիլմի հեղինակ է:** Շեշտում է.՝ Ցեղասպանութեան թեման իրեն համար կարեւոր է ու կարծում է ինչքան որ հնարաւոր է շատ մարդիկ պիտի տեղեակ լինեն այդ մասին:

Թոմ Օհանեանը համագործակցում է ամերիկահայ տարբեր հայկական կազմակերպութիւնների հետ: Նա անվճար արհեստագիտութիւն է տրամադրում հայոց ցեղասպանութեանը վերաբերող վնասուած կինոփաստաթղթերի թուայնացման համար: Նա, միաժամանակ, արհեստագիտութեան մասին համալսարանական տարբեր մասնագիտական դասագրքերի հեղինակ է:

Ուրիշներ

1-Ամերիկահայ **Աշոտ Նալբանդեանը**, ով 2001 թուականին **Օսքարի մրցանակ ստացաւ** արհեստագիտական նուաճումների անուանակարգում՝ հանրայայտ «Թիթանիք» ֆիլմի համար: Մրցանակը կիսուեց ուրիշ դերակատարների հետ:

2-**Կլէն Ֆարրը (Glenn Farr)**, ով 1984 թուականին **Օսքարի մրցանակ արժանացաւ** լաւագոյն մոնտաժ բնագաւառում՝ «Ընտիր կազմ» կինոնկարի համար: Յիշատակում կայ նրա հայկական ծագման մասին: Նա ԱՄՆ-ում գործող «Հայկական ֆիլմ» հիմնադրամի խորհրդի անդամ է:

Գիրքերու Աշխարհ

Հայկական Ասացուածքներ Թրքերէնէ Թարգմանուած Հեղինակ՝ Գեորգ Լ. Քեօշկերեան

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Գրողին եւ անոր տողերուն եւ արտայայտութիւններուն ծանօթացման գրաւոր եւ բաց դաշտ մըն է գրախօսականը: Կը սիրեմ խանդավառով մեր նոր արժեքներով եւ ահա այս օրերուն, վերել նշեալ գրքովը: Ու համետօրէն, հայ գիրքը վերարժեւորելու ու անով մեր կեանքը ծաղկեցնելու գիտակից յանձնառութեամբ, կը փորձեմ Գեորգ Քեօշկերեանի նոր լոյս ընծայած «Հայկական Ասացուածքներ - Թրքերէնէ Թարգմանուած» գրքովին մօտենալ եւ զայն ընթերցողին հրամցնել:

Սակայն ո՞վ է գրքովի հեղինակ՝ Գեորգ Լ. Քեօշկերեանը, որ 2020-ին հայ ընթերցողի սեղանին հրամցուցած էր ինքնատիպ յղացումով, նոր ոճով եւ նոր մօտեցումով իր առաջին գիրքը: Անկեղծօրէն ըսեմ, որ ան մեր գաղութին քաջածանօթ կրթական մշակն է:

Վաստակաշատ միութենական մը ըլլալով հանդերձ, ան նաեւ բծախնդիր եւ ծանօթ ազգային գործիչ մըն է, հայ մամուլի տեւական նուիրեալ գրիչ ու հայ թատրոնի եւ բեմի համեստ ծառայող եւ խնկարկողի կողքին:


Արդ, ի՞նչ է ասացուածքը «ըսուածը» ձեզի համար: Պարզապէս ըսեմ, որ ասացուածքը ուրիշ «բան» չէ, եթէ ոչ պատկերաւոր, տպաւորիչ, կարճ եւ իմաստային, դաստիարակչական եւ նոյնքան ալ բարոյական եւ խրատական խօսք-նախադասութիւն մը, որ կը ստեղծուի ժողովուրդին կողմէ եւ որ առաձներուն նման ընդհանրացած է նոյն այդ ժողովուրդի բերնին մէջ: Ան կը ներկայացնէ զինք յօրինող նոյն ժողովուրդին բարք ու աշխարհայեացքը ու կը պատկանի անոր մշակոյթին:

Ասացուածքը նաեւ կը գործածուի արտայայտուած միտք մը աւելի տպաւորող եւ համոզիչ դարձնելու համար: Այլաբանական խօսք մը չէ, այլ ըսելու ձեւ մը եւ կերպ մը, որ լեզուայն կը հասկցուի: Եւ իւրաքանչիւր ժողովուրդ դարերու ընթացքին ունեցած է եւ ունի իր ասացուածքները, ու զանոնք «օգտագործելով» կամ «գործածելով», այդ ձեւով է, որ սերունդէ սերունդ փոխանցուած է:

«Հայկական Ասացուածքներ...» գրքովը կը բովանդակէ 403 ասացուածքներ, որոնք թրքերէնէ թարգմանուած են, որովհետեւ հեղինակը կ'արդարանայ ըսելով, թէ «Սկիզբը խորթ թուեցաւ ինծի զանոնք գրի առնել, պարզապէս որովհետեւ լեզուն թրքերէն էր: Բայց մտածեցի, որ անոնք ի սկզբանէ հայկական ասացուածքներ էին, որոնք մեզի փոխանցուած էին Կիլիկիոյ մեր թրքախօս նախահայրերէն»:

Ուստի, Քեօշկերեան վերոյիշելով Կիլիկիացի իր ծնողներուն «բացատրութիւնները», զանոնք հայկական նկատած էր: Սակայն, եթէ հարց տանք ինչո՞ւ նման աշխատանք: Պատասխանը պիտի գտնենք, հատորի նախաբանին մէջ, Վաչէ Սեմերճեանի կողմէ հրամցուած արդարացումը. - որ իր կարծիքով «Եւ ի՞նչ ենք լսած մեր ծնողներէն տասնամեակներու ընթացքին...անշուշտ թրքերէն...եւ պէտք է ըսել, որ ոչ մէկուն մեղքն էր թրքերէնի յարատեւ գործածութիւնը»:

Իսկ գրքովին մէջ տեղ գտած ծաղրանկարներու եւ մանրանկարներու կողքին կը հանդիպինք (անշուշտ դարձեալ թրքերէնէ թարգմանուած) մարդոց տարիքներու յատկանիշներու բաժնին, ինչպէս նաեւ հայկական առասպելներ ու ասացուածքներու յատուկ այր-կին տարիքային բաղդատութիւնը մատնանշող էջերուն: Իսկ վերջին՝ տեղադրուած է բովանդակութեան



անգլերէն տարբերակը, որ վարպետօրէն թարգմանած է Գրիգոր Սաթամեան: Հեղինակ Քեօշկերեան նաեւ առ ի երախտագիտութիւն՝ չէ մոռցած իր յատուկ շնորհակալութիւնները հրապարակել բոլոր անոնց, որոնք ներդրում ունեցած են գրքովի լոյս ընծայման:

Այսպէս, Վաչէ Սեմերճեանին՝ հատորը խմբագրելուն, Հերի Մետրոպեանին՝ գրքովի ձեւաւորման, արուեստագէտ Սիրուն Երեցեանին՝ տեղադրուած մանրանկարներուն, Լուս Անճելյոսի Թ.Մ.Ս.ին՝ Սարուխանի գծագրութիւնները արտօնելուն, Կարինէ Տէր Գեորգեանին ու Նուրիցա եւ Անժել Զիւրքչեաններուն՝ ասացուածքներու յատուկ ձեռագիր հաւաքածոներու գրքովը տրամադրելուն, Նորայր Տատուրեանին՝ գրքովի վերատեսութեան եւ Մերժ Նաւեանին հեղինակի նորատիպ նկարին համար:

Եւ անկեղծօրէն արտայայտուելով, ըսեմ, որ ինծի համար գրքովը սահուն եւ հասկնալի իր սահուն ոճով, նաեւ ունի որոշ խորհուրդ մը: Ան դասատու ալ է, եւ մարդս կը մղէ մտածելու ու նոյնիսկ խորհրդածելու, որովհետեւ անոնք շաղխուած են բաղձանքի եւ մաղթանքի երանգներով, որոնք ընթերցողին մօտ որոշ համակրանք մըն ալ կը ստեղծեն: Գրքովը նաեւ շարժման մէջ կը դնէ զանազան գաղափարներ եւ մտածելու կը մղէ ընթերցողը: Թեւ տարուած աշխատանքը թարգմանական է, բայց այդ մէկը եղած է բծախնդիր ու իր մէջ պահած հայկական աւանդութիւնը: Ահա թէ ինչո՞ւ «Հայկական Ասացուածքներ...» այս գրքովը կարելի է նկատել օգտաշատ հրատարակութիւն մը, որուն համար իբրեւ մաքուր տպաւորութիւն աւելցնեմ, որ գրելու եւ ներկայացնելու ձեւը նորոյթ ըլլալով հանդերձ, մտերիմ ալ է:

Արդ, հարկաւոր ասացուածքներէն՝ այս օրինակը, բաւարար է արդէն ընդհանուր կարծիք մը կազմելու գրքովի մասին:

«Հէր կիւզէլիկ պի արատա պուլունմագ»:

Ամէն գեղեցկութիւն միատեղ չի գտնուիր:

Այսինքն, մարդը միշտ կատարեալ չըլլար:

Պէտք է ըսել, որ գրքովի իւրաքանչիւր էջ, իր հմայքն ու որոշ պատգամ ունի: Անկասկած, ընթերցողը հաճոյքով պիտի ըմբռնէ: Եականը այս բոլորէն ետք, փոխանցել եւ տարածելն է: Չմոռնանք սակայն, որ նոյնքան կարեւոր է հայ գրողը քաջալերելը: Այս եւս մեր մշակութային առաքելութիւնն է:

Ի սրտէ կը շնորհաւորենք հեղինակ՝ Գեորգ Լ. Քեօշկերեանը, ու անպայման վարձքը կատար կ'ըսենք, յուսալով որ շուտով այս հատորը ունենայ նաեւ իր յաջորդն ալ:

Ապրիս: Գրիչդ դալար:

Գառնիկ Եագուպեանի Լուսէ Յիշատակին. Հրանուշ Յակոբեանի Ցաւակցագիրը

Սկիզբը Էջ 03

Միշտ հիացել եմ Գառնիկ Եագուպեանի մարդկային հրաշալի որակներով: Նա իսկական Նահապետ էր, արժանապատիւ ու առինքնող, համեստ ու իմաստուն:

Անհուն սիրով եւ քնքշանքով էր վերաբերում իր ընտանիքին, կնոջը՝ Անիին, որդուն, դուստրերին եւ թոռներին:

Թեւ այսօր ֆիզիկապէս մեզ հետ չէ Մեծ հայը, Մեծ Մարդը, սակայն մնացին նրա բարեգործութիւնները, նրա կատարած ազգանուէր գործերը, նրա շնորհիւ իրականացուած բազում ծրագրերը:

Ցաւակցում եմ Եագուպեանի կնոջը, զաւակներին, Վազգէնին, հարազատներին, ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակեանին, բոլոր անդամներին, նրան ճանաչողներին եւ բոլորիդ հետ միասին սգում Գառնիկ Եագուպեանի երկրային կեանքի աւարտը, յայտնում եմ իմ խորին ցաւակցութիւնը եւ կիսում Ձեր վիշտը:

Ափսո՛ս, հազա՛ր ափսոս...

Թող Աստուած Գառնիկ Եագուպեանի հոգին լուսաւորի եւ արժանացնի նրան երկնային Արքայութեան:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի եւ վաստակն ապրողաց օրհնեալ եղիցի»:

Անկեղծ վշտակցութեամբ՝

Հրանուշ Յակոբեան

ՀՀ Սփիւռքի հիմնադիր նախարար,

Արտակարգ եւ լիազօր դեսպան,

Իրաւաբանական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր

Մշակութային Արձագանգ

Օսքար Ստացած Հայազգի Արուեստագետներ

Շար. Էջ 05-Է

3-Ամերիկահայ **Բաբգեն Շահբազեանը**, ով 2007 թուականին **Օսքարի մրցանակ ստացա**լ արհեստագիտական նուաճումների համար:
4-Իրանահայ ծագումով՝ ամերիկահայ **Գուրգեն Ռեյ Աղայեանը**, ով երեք անգամ Օսքարի մրցանակի թեկնածու է դարձել՝ զգեստների ձեւաւորման անուանակարգում, բայց մրցանակը չի ստացել:
5-Ամերիկահայ ճանաչուած դերասան **Ակիմ Թամիրովը (Յովակիմ Թայմիրեանց)**, ով երկու անգամ Օսքարի մրցանակի թեկնածու է դարձել, բայց չի ստացել:
6-Թատրոնի եւ կինոյի հռչակաւոր բեմադրիչ ամերիկահայ **Ռուբեն Մամուլեանը**, ով Օսքարի մրցանակի թեկնածու է դարձել, բայց չի ստացել:
7-Ամերիկահայ **Արա Զեքմայեանը**, ով 1984 թուականին Օսքարի մրցանակի թեկնածու է դարձել՝ լաւագոյն լիամետրաժ փաստագրական ֆիլմի համար, բայց մրցանակը չի ստացել:
8-Ամերիկահայ **Հանք Մունջեանը** (Hank Moonjean), ով 1988 թուականին, լաւագոյն

արտադրող անուանակարգում Օսքարի մրցանակի թեկնածու է դարձել, բայց մրցանակը չի ստացել:

9-Ամերիկահայ **Պոպի Գարաբեդեանը (Կարապետեան)**, ով 2004 թուականին, չեխ-ամերիկեան կարճամետրաժ ֆիլմի համար Օսքարի մրցանակի թեկնածու է դարձել, բայց չի ստացել:

10-Գանատահայ կինոբեմադրիչ **Ատոմ Էգոյեանը**, ով Օսքարի թեկնածու է դարձել, բայց չի ստացել:

Հայաստանը

Մինչեւ այսօր, Հայաստանից ոչ-մի ֆիլմ չի ընդգրկուել Օսքարի «Լաւագոյն օտարալեզու ֆիլմ» անուանակարգում: 2017 եւ 2018 թուականներին, Հայաստանը ներկայացրել է ֆիլմեր, որոնք Օսքարի կանոնադրութեան համաձայն՝ մերժուել են (ֆիլմերը պիտի լինեն միայն տուեալ երկրի արտադրութիւն): Հայաստանից ներկայացրած առաջին ֆիլմը հայ-ռուսական արտադրութիւն էր, իսկ երկրորդը՝ հայ-իրանական:

Հայկական Լուրեր

Մենք Պետք ՉԷ Վարանիք Յանուն Արցախի Որեւէ Այլ Դժուարութիւն Պատուով Կրելու. Արցախի Թեմի Առաջնորդ

Սկիզբը Էջ 01

Թշնամիի քայլերը մեծապէս կախուած են մեր բռնած դիրքէն ու զգոնութեան մակարդակէն, եւ մենք մեր միասնականութեամբ ու մեր գօտիները ամուր կապած պետք է ստիպենք յարգել մեզ ու մեր ազատութիւնը: Մենք խնդիր ունինք միախմբուելու, պետք է հասկնանք, որ հայրենիքի եւ պետութեան շահը պետք է գերազանցէ մեր անձնական շահը, վեր դասուի մեր բոլոր կենցաղային առօրեայ եւ անձնական մղումներէն ու դառնայ գերակայ բոլորիս կեանքին մէջ: Այն անձերը, որոնք այսօր ունին լծակներ կանգնելու Հայոց գինուորի եւ Հայոց պետականութեան կողքին, պետք է վայրկեան իսկ չվարանիս եւ անցնին գործի: Զանգի այս պատերազմը իբրեւ կրակ կը բռնկուի տունէ տուն եւ չի խղճար ոչ մէկուն:

Եթէ մենք իսկապէս սիրենք մեր երկիրը, հաս եւ հաւատարիմ ըլլանք անոր, հաւատացէք, Աստուած աւելիով պիտի վարձատրէ մեզի:

Թո՛ղ Աստուած զօրացնէ մեզ ու մեր հայրենեաց բոլոր պաշտպանները՝ չընկճուելու, ամուր



կանգնելու, հաւատով առաջնորդուելու եւ զգոնութիւնը չկորսնցնելու:


Թո՛ղ Աստուած պահէ եւ պահպանէ Արցախ աշխարհը
Վրդանէս Եպիսկոպոս Աբրահամեան

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Կտոր Մը Սէր

Ա՛հ, շողա՛, շողա՛, բարի՛ արեւ, հիւանդ եմ...
Վերջին անգամ մըն ալ,
Դեռ իրիկուն՝ չեղած
Ու, դեռ տամուկ գիշերին վիուկը գիս
չընդգրկած,
Վերջին անգամ մըն ալ
Փարե՛ հոգւոյս խանդաբոբ ու կաթոգին՝,
Հիւանդ եմ, բարի՛ արեւ, շողա՛, շողա՛...

ՄԻՍԱԶ ՄԵՇԱՐԵՆՏ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

29 2022
ՄԱՐՏ

Կրկ Երկ Երեք Չորեք Հինգ Ուրբ Շաբթ

		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31		



ԱԼԵՔՍԱՆՏՐ ՇԱՔԱՐԵԱՆ
(1912 – 1984)
«Գիւղական տեսարան»

Dans le cadre du mois de la Francophonie au Liban
l'ambassade de la République d'Arménie
en partenariat avec UGAB Liban (AGBU Lebanon)
vous invite à l'exposition de photographie

CONFLITS

Tracé d'images de 1990 à 2020 par
Michel Esta
Photographe et Enseignant Universitaire

Une présentation par l'artiste aura lieu
durant l'exposition

Mardi 29 Mars 2022 à 19h30
Centre AGBU Demirdjian, Dbayé
L'exposition se prolongera jusqu'au 5 Avril

Parking assuré

Heures d'ouverture:
du Mercredi 30 Mars à Mardi 5 Avril
de 16h30 à 20h30
Samedi 2 Avril
de 10h à 12h



Մարզական

Յաղթական Շաբաթավերջ Մը ՀԲԸՄ-ՅԵԸ-ի Մարզախումբերուն Համար

ՀԲԸՄ-ՅԵԸ-ի մարզախումբերը չորս փայլուն յաղթանակ արձանագրեցին շաբաթավերջին:

ՀԵԸ Անդրանիկ մինի ֆուլթայի տղոց կազմը Շաբաթ օր՝ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրենտօը եւ հասաւ Լիբանանի բաժակի կիսա-լարտականին:

Կիսալարտականին, ՀԵԸ Անդրանիկի մրցակիցը պիտի ըլլայ Ղասանին: Ծակատումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ 1 Ապրիլ 2022, կեսօրէ ետք ժամը՝ -ին, ՀԵԸ Անդրանիկի մարզադաշտին մէջ եւ ուղիղ հաղորդումով պիտի սփռուի հեռատեսիլի Էլ.Պի.Սի կայանէն: Աւարտականի մրցումը նոյնպէս տեղի պիտի ունենայ ՀԵԸ Անդրանիկի մարզադաշտին մէջ:



ՀԵԸ Անդրանիկ Մինի Ֆուլթայի խումբին գլխաւոր մարզիչն Է Ատել Ռիզը, օգնական մարզիչը՝ Գօգօ Ալոզեանը, վարչական պատասխանատուն՝ Ալեքս Առաքելեանը, իսկ ֆետերասիոնին մէջ ՀԵԸ-ի ներկայացուցիչը՝ Թոնի Ճուկոյեանը:

Լիբանանի տղոց պասքէթբոլի Ա. դասակարգի ախոյեանութեան հերթական մրցումներու գծով, ՀԵԸ Անդրանիկի տղաքը յետ երկարածգումի՝ 108-105 արդիւնքով պարտութեան մատնեցին Չահլէի Անիպալը: Մրցումը տեղի ունեցաւ այս վերջնային դաշտին մէջ:



Միւս կողմէ, աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներու գծով, ՀԵԸ Անդրանիկ Մին Էլ Ֆիլ՝ 61-45 արդիւնքով պարտութեան մատնեց Եու.Էս. ԺԷ-ն: ՀԵԸ Անդրանիկ աղջկանց խումբին վարչական պատասխանատուն Է Նայիրի Սուէյտին:



Յաղթանակներու ամենափայլունը անկասկած արձանագրուեցաւ փինկ փոնկի մէջ, երբ ՀԵԸ Անդրանիկը ներկայացնող Մարիանա Սահակեան շահեցաւ փինկ փոնկի Լիբանանի բաժակը: Տղոց կազմը դարձաւ բաժակի ֆինալիստ: ՀԵԸ Անդրանիկ փինկ փոնկի խումբերուն գլխաւոր մարզիչն Է Մելիք Թաուիլը, վարչական պատասխանատուն՝ Սահակ Պիտինեանը:

Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք ՀԲԸՄ-ՅԵԸ-ի բոլոր մարզական կազմերուն եւ վարչական պատասխանատուներուն:



ՀԲԸՄ-ՅԵԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԵՄԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵՎՈՑ

ՆՈՒՐՈՒՄՈՒՄ

ԱՌՆՈ ՊԱՊԱՃԱՆԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

ԲԱՆԱԽՈՒՄ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻՔ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻ ԴԵԿԱՎԱՐ ԿԱՌՈ ԱՆԵՍԵԱՆ

ԳԷՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՈՒՐԲԱՅ, 1 ԱՊՐԻՆ, 2022, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 8-ԻՆ, ՀԲԸՄ-Ի ՏԵՄԻՐՃԵԱՆ ԿԵՐՈՒՄ Բ. ՅԱՐԿԻ ՄՐԱՇԻՆ ՄԷՋ:

ՀՐԱՒԷՐ

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորդած վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: